ՄԵԾՐ ԷԹՈՒՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԲԵՐՎԵՑԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Օգոստոսի 14-ին «Կրեմլ» /Մոսկվա/ պատմամշակութային արգելանոց-թանգարանի «Ուսպենսկյան» զանգակատան ցուցասրահում տեղի ունեցավ «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի փակման հանդիսավոր արարողությունը:

Հանդիսությանը մասնակցում էին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, Ներսեհ աբեղա Խալաթյանը, թեմական խորհրդի անդամներ, Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատան պատասխանատու աշխատակիցներից Սերգեյ Սմբատյանը, Հայաստանի Հանրապետության կրոնի գործոց պետական կոմիտեի նախագահ Լազար Սուջյանը:

Լազար Սուջյանը հանդիսավոր պայմաններում ընթերցեց և թանգարանի անձնակազմին հանձնեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանքի նամակը ցուցահանդեսի մոսկովյան կազմակերպիչներին:

Փոխադարձաբար «Կրեմլ» պատմամշակութային արգելանոց-թանգարանի տնօրինուհի Իրինա Ռոդիմցևայի ստորագրությամբ պարոն Սուջյանին հանձնվեց շնորհակալագիր, որում բարձր գնահատվեց ցուցահանդեսի հայկական կողմի կազմակերպիչների, մասնավորապես պատասխանատու կազմակերպիչ Հովհաննես Թագուկյանի և նկարիչ-ձևավորող Անդրանիկ Անտոնյանի աշխատանքը, նրանց հանձնվեցին արժեքավոր նվերներ:

Անվտանգության ծառայության և Մայր Աթոռի աշխատակիցների ուղեկցությամբ ցուցահանդեսի նմուշները ապահով փոխադրվեցին Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում զետեղվեցին իրենց տեղերում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ